



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

3326

491.99-8  
L-82

1904

2910

ՅՈՎՀ. ԱՐԵՐԱԶԵՐՆ

1904. № 1052.

# ՄԱՅՐԵՒԻ ԼԵզուի

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

(482)

(Պատկերներով, գրութեան օրինակներով, գրալր վարժութիաններով եւ շարժական այլուրներով)

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԻՆՍԻՏՈՒԹԵԱ  
ԲՈՒԺԱԿԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՍՍՀ

ԳՐԱԴԱՐԱՆ  
ԿՈՂՈՎԻ


ДОПУЩЕНА Попечительскимъ Совѣтомъ Кавказскаго Учебнаго  
Округа къ употребленію въ училищахъ

Տարբաց ապագայութեան

ԱԼԵՔՍԱՆԴՐԱԳՈԼ  
Տպարան Դէորդ Ս. Մանյեամցի  
1904

91.99-8  
Ա-82

2002





С арт-к  
321

6042. 09090906

491.99-8

и - 82

# ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԱՊԱԶԻՆ ՏԱՐԻ

БИБЛІОТЕКА  
ІНСТИТУТА  
ДАРДАРИ  
ԲІЛДАРСИ МУЗІК  
СССР

(Պատկերներով, գրութեան օրինակներով, գրաւոր վարժութիմներով եւ շարժական այրութենով)

допущена Попечительскимъ Совѣтомъ Кавказскаго Учебнаго  
Округа къ употребленію въ училищахъ

Կ Հ Ա Ս Խ Հ Ե Շ Ե Վ Կ Ա Վ Կ

Զարգաց ապահովութեան



ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈՂ  
Տպարան Գէորգ Ս. Սահնոյեացի  
1904

## ԱՅԲԵՆԱՐԱՆԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Дозволено цензурою. 15-го декабря 1903 года, г. Тифлисъ.

50425-<sup>mh</sup>


36156-66



1. Եւրաքանչիւր դասի սկզբում մի պատկեր իւր անունով, որի օգնութեամբ մանուկները հեշտութեամբ կ'իմանան, թէ ինչովէս է կարդացւում անծանօթ տառը:
  2. Նոր տառով բառեր (վանկերի բաժանած)՝ կարդալու և զբելու համար:
  3. **Փոքրիկ** նախաղանութիւններ և հայկական դիւր-ըմբռնելի առածներ (վանկերով և առանց վանկերի)՝ կապակցական ընթերցանութեան համար:

ՍԱՍՆ ԱՌԱՋԻՆ  
ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

1.




սար

ս, ս, ր, սար.

սա. սար. ս - սա. ս - րա:

2.




մաս

մ, պ, մաս.

Մաս. տաս. տար. արտ. տամ ա-տամ. Արամ:


3.



**մաս** դ, մազ

Աղ. մաղ. տաղ. ա-րաղ. տա-րաղ: — Ա-րամ, տաղ ա-սա:

4.



**տաշտ** չ, գաշդ

Տաշտ. շատ. շա-մամ: — Ար-շամ, շա-մամ տամ:

5.



**թիթ** թ, թիթ

Իմ. մի. միս. տա-րի. մա-տիտ: — Մա-րի-ամ, ա-րի,  
մաղ տամ:

6.



**սազ** դ, սազ

Սա. սազ. զա-րի. Մազ-տաղ: — Մար-զար, ա-րի, զա-  
րի տամ: Մարզիս, շամամ տալ:

7.



**b-րես**

Ես. եղ. տեղ. ա-սեղ. ա-ղեղ:—Մարիամ, երգ եր-  
գիր: Ես մի երգ զիտեմ:


8.



**nստ**

Որ. որս. որ-տեղ. շոր. գող. զողեր:—Մարգա-  
րիտ, ո՞ր-տեղ ես: Գրիգոր, շոր տար: Մարգիս, արի,  
որսի միս տամ:


9.



**կար**

Կեր. կա-լաս. եր-կար. ոս-կի:— Աստ-դիկ, շոր  
կա-րիր: Մակար, մատաղ արա: Կատար, մի երգ երգես:

10.



**նա-մակ**

Նա. նան. Ան-նա. գի-նի. մա-տա-նի:— Ես մե-  
նակ եմ: Նանի, կարագ տամ: Զողիկ, տատին նամակ  
տար: Մանիկ, աղ մաղիր:

11.


10

# տա-սը

*թ, դասը*

Ըն-կեր. ըն-տիր. ըն-տա-նի. մա-ղը. կա-րա-սը:—  
Ար-շա-կը զի-նի կը-տա-նի: Աստղիկ, իմ ընկեր Սի-  
սա-կին որ կը տեսնես, արի, ասն:

12.



# ցանց

*չ, ցանց*

Գրի-զո-ըը ցո-րեն ցա-նեց: Ա-շա-կեր-տը նա-մակ  
զը-րեց: Իմ ընկերը սարը զնաց: Մացակը կացինը  
սեղանի տակ զցեց:


13.



Եշ

Կա-րի-նէն մեր տա-նըն է: Գէ-որ-զը իմ ըն-կե-ըլն  
է: Իմ զեղեցիկ մատանին մատիս է: Սղոցը սեղանի  
տակին է: Մեր սազը շատ զեղեցիկ է:

14.




# նաւ

*չ, նաւ*

Նաւակը զետի երեսին է: Կաւից ամաններ շինեցին: Եսաւը որսի վնաց: Նաւատէրը նոր նաւ գնեց:

Եւ—և



## ԱԵՐԵԼ

*Է, դրիւ.*

Սև. արև. կեղեւ:—Ճողիկը և Սատղիկը: Արամը և Գեղամը ընկերներ են: Գետնին շատ տերևներ կան: Եղևնին գեղեցիկ է:

15.




## ԿԱ-ՄՈՒ

*Մ, խայու.*

Ճունը շանից, երկուսը մի տանից: Ճունըն ու

կատուն իրար միս են ուտում: Արշակը մեր ուրագը կորցրեց: Ուսումնարանում մանուկները գրում են:

16.



## ՂԱ-ՆԱԿ

*Ղ, ղանակ.*

Ուղտըն ընտանի կենդանի է: Մեր զրացին դանակ գընեց: Գուրը զարակումն է: Գող, սիրտը դող: Մեր զրացու որդին իր դասը գիտէ:

17.




## ԲԱԴ

*Բ, բայ.*

Բագարատ, բամբակ գընիր, տատին տար:

Բամ-բա-կը զաշ-տու-մըն է բուս-նում: Մաննւկ,  
միշտ բարի եղիր: Բարի մարդկանց ամենը սիրում են:  
Բաղը զետում գորտ է որսում:


18.



**համ** *h, ham*

Աղ ու հաց, սիր-տը բաց: Գար-բի-նը բահ է շի-  
նում: Գանակը ոսկորին մի՛ հասցնիր: Համբերող եղիր:  
Հեղինէն համեստ է:


19.



**բամ** *h, ham*

Լու-սի-նը լու-սա-ւո-րում է եր-կի-րը: Մա-զե-րը լո-զում  
են զե-տի ե-րե-սին: Լու տղան ընկերից կերեի: Մի  
ասիր, մի՛ լսիր: Լորը արտերումն է շինում իր բունը:


20.



**զանգ** *g, zang*

Ող-նին կեն-զա-նի է: Լե-զուն զա-նա-կից սուր է: Զա-  
րուհու մագերը շատ երկար են: Բզէզը բըզզում է: Բա-  
զէն հաւ տարաւ: Գաղանները սարերումն են բնակում:


21.



**օ-դակ** *e, odayk*

Սկ օ-րին էլ սկ շոր է հար-կա-ւոր: Մօ-տիկ հա-րե-  
ւա-նը բա-րե-կա-մից լաւ է: Մահը մէկ օր, լացը մէկ  
օր: Իմ հօր կօշիկները օրօրոցի տակն են:

22



*duis* *F. S. L.*

Ժա-մա-սէր մարդիկ ժամեն զը-նում: Բը-ժիշ-կը հի-  
ւան-դին զեղ է տալիս: Ժամանակը ոսկի է: Բաժակը  
սեղանին է: Գժի համար ամեն օր նոր տարի է:

23.



# Puu

p, p.m.

Բա-դի թա-թը կարմիր է: Թե-լը որ բա-րա-կեց,  
կը-կլտ-րի: Թող սև լինի, շատ լինի: Մեր թասը դա-  
տարկ է: Ճողակաթը կաթ բերեց մեզ: Թանը թթու է:  
ուրբաթ օրը տօն է:

24.



36156-66

**pbn**      n, pf/n

Աղ-ոա-ւը կըո-կը-ոում է: Որու-բէ-նը մա-ոա-նից  
զա-ոի միս է բե-րում: Գառը գարնանը կըլինի: Ես  
շատ ոուսերէն բառեր պիտեմ: Գնա մեռիր, արի սիրեմ:  
Դանակը ոսկուին է հասել:




25.



## ծառ *թ, ժառ*

Կար-կու-տը ծե-ծած տե-ղը կը-ծե-ծէ: Ծե-րա-նաս,  
ծե-րի հա-լը ի-մա-նաս: Ծիծեռնակը գարնանը կ'երեի:  
Լեզուն ածելուց սուր է: Ամեն ծաղիկ իր հոտն ունի:  
Հացը դրած, բանն անիծած:

26.



## ճանճ *թ, հանճ*

Ճա-հի-ճում շատ ճի-ճու-ներ կան: Ճա-զա-րը սի-րուն  
կեն-դա-նի է: Ճրագը գիշերն է հարկաւոր: Մաթենիկը  
ճաշ է անում: Եղբօրս ճակատը շատ կնճիռներ ունի:


27.



## պար-տէզ *պ, պարտէզ*

Պա-պը պար-կած է պար-տի-զում: Պաս ու-տեմ  
պաս, ին էլ թա-նէ սը-պան: Նապաստակն ու ճագարը  
մի ցեղից են: Մեր եղը երկար պողեր ունի: Հաց ու  
պանիր, կեր ու բանիր:

28.




## զրիչ *չ, զրիչ*

Զան հա-չա-լուն մի հա-ւա-տալ: Ճու-նը շան մը-սից  
չի ու-տիլ: Չար մանուկները չարչարում են ճանճերին:

Միսն առանց ոսկոռ չի լինիլ: Ինչ կ' ասես, էն կըլսես:  
Ուրագն իր կոթը չի տաշիլ:

29.



## Չու-թակ

*չ, ջու բակ.*

Ճ-րի բե-րա-ծը ջու-րը կը-տա-նի: Ճըր-հո-րից մար-  
դիկ ջուր են հա-նում: Կուժը ջրի ճամպին կըկտրի:  
Արջը զարհուրելի զագան է: Ճրաղացում մարդիկ հացա-  
հատիկ են աղում: Անջուր ջրաղաց, անկրակ բաղարչ:

30.



## Վարդ

*չ, վարդ.*

Վազ-րը վի-րա-ւո-րեց որ-սոր-դին: Վարդը շատ հո-  
տաւէտ է: Ուղտին զղալով չեն ջրիլ: Ճունը կաղալով  
չի սատկիլ: Մէկ ծաղկով զարուն չի գալ:

31.




## Ճի

*չ, չի.*

Ճըկ-նոր-սը ցան-ցով ձուկ է որառւմ: Կար-միր ձուն  
Զատ-կին կը-սա-զի: Ինչ որ ցանես, էն կըհնձես: Եշը  
դատի, ձին ուտէ: Անուշ լեզուն օձը ծակից կըհանէ:


32.



## Խող

*ի, խող.*

Խողը շատակեր կենդանին է: Մեղքը ծախողը  
մատը կը-լի-գէ: Չուկը գլխից կըհոտի: Խնկին խրատը,  
սկին սապոնը ի՞նչ անէ: Ի՞նչ կըբրդես, Է՞ն կըխրթես:  
33.



## փիղ

*փ, փիղ*

Փղա-պանը փողոցով փիղ է ման ա-ծում: Մե-  
ղոները փեթակում մեղք են շինում: Վարդն առանց  
փփ չի լինի: Վարդը վերցրու, փշին կրակ տուր:  
34.




## փիթ

*փ, փիթ*

Տաշած քարը գետնին չի մը-նալ: Մենք աչքով  
տեսնում ենք: Քամու բերածը քամին կրտանի: Օձն  
առաջ իրան տաքացնողին կըկծի: Ծիտակ խօսքը հա-  
նաքի միջով կ'ասեն: Քիչ բարձիր, շուտ դարձիր: Երկա-  
թը տաք-տաք կըծեծեն:

35.




## փուր-զօն

*փ, փուրզօն*

Փուրզօնով ապրանք են կը-րում: Թուրքերը  
ֆէս են ծած-կում: Նունուֆարը գեղեցիկ ծաղիկ է:  
Ֆառաշով աղք են հաւաքում: Օձը ֆլշում է: Փղին  
ֆիլ էլ են ասում: Գնչուհին ֆալ է բաց անում:

36.



## յու-վազ

*յուվազ*

I.

Յունիսին մենք յար-մար բնա-կա-րան կը-զըտ-նենք:  
Յուլիսին եղանակն անտանելի է դառնում: Յոպովն  
ինքն է հոտած, հէնց գիտէ՝ բունն է հոտած:

II.



# այծ

Հայրս մի գայլի ձագ բռնեց: Սոտծու պահած գառը  
գայլը չի ուտիլ: Որտեղ հաց, այնտեղ կաց: Մայրս ու  
եղբայրս այգի կնացին:


III.

Նա հայ է: Վայ ձեզ: Եղբայրս այսօր թէյ չունի:  
Ճայը ճահճային թոշուն է: Օ՛յ, ինչ շոգ եղանակ է:  
Հէյ, բարեկամ, այդ ուր ես զնում:

IV.

Մինչև տղան չլայ, մայրը նրան ծիծ չի տայ: Զուրն  
ընկնողը անձրեից չի վախենայ: Զուրը չտեսած մի  
բորիկանայ: Ով որ խաղայ, նա կըկաղայ: Գայլն ամպ  
օրը կ'ուրախանայ: Այսօր մի քահանայ տեսայ: Բանդ  
արա, յետոյ խաղա:

V.




# ԺԱ-ՄԱ-ԳՈՅՑ

Ժամագործը ժամացոյց է շինում: Մի ծաղկից օձը  
թոյն է շինում, ճանճը — մեղը: Մակոյկով լողում են  
գետի երեսին: Ժառը բոյս է: Ծոյլ աշակերտը պատժի  
արժանի է: Քոյրս Արշալոյսին նամակ է գրում:

37.

I.



## առիւծ

Դիւրակի օրը խղալի կերակուր կերանք: Հիւրն  
եկաւ, հիւրը գնաց, տեղը դատարկ չմնաց: Աղբիւրի մօտ  
մեծ բազմութիւն կայ: Աշակերտը իւր դառն է սովորում:

II.



## արծիւ


Փոքրերը պէտք է պատիւ տան մեծերին: Փողե-  
րիդ հաշիւր գիտցիր: Մեր դրացու տունը սուգ ու շի-  
ւան կայ: Հիւանդը որ գնալու լինի, մատաղը չի օգնի:  
Ճերանաս, ծերի պատիւր կ'իմանաս:

38.

## ես. եօ.

Համբերութիւնը կեանք է: Եօթը ծովից, մէկ կո-  
վից: Կարծեօք սենեակում մարդ կայ: Արդեօք Երբ  
պէտք է երկինքը պարզէ և լուսնեակը դուրս գայ: Յի-  
սուս Քրիստոս եօթանասուն երկու աշակերտ ունէր:

39.




## աղուէս

Սղուէսը խորամանկ կենդանի է: Զուի գողը ձիու  
գող կլղառնայ: Զմեռուայ վարդը կրակն է: Ամառուայ  
փուշը, ձմեռուայ նուշն է: Կատուին խաղ է, մկանը  
մահ է: Գետինը ձիւնով ծածկուեց: Այսօրուայ գործը  
վաղուան մի թողնիր:

40.

Զգալ—ըզգալ: Ջտապել—ըշտապել: Մկսել—ըսկսել:  
Ստանալ—ըստանալ: Մպիտակ—ըսպիտակ:

Մկրում Աստուած ստեղծեց Երկինքն ու Երկերը:  
Մպոնգը ծովից են հանում: Մպիտակ շունը բամբակ  
ծախողին վնաս է: Ջտապողին չի յաջողուիլ: Մկրուը  
թռչկոտում է ծառից ծառ: Ցուրտն արդէն զգալի է:  
Երեխաներն զրօնում են պարտիզում: Զգոյշ կացէք,  
փորձութեան մէջ շընկնէք:



ՀԱՅԵՐԷՆ ԱՅԲՈՒԲԵՆԸ:

w, p, q, t, b, q, t, l, թ, ժ, h, l, լ, լս, ծ, կ, հ, ձ,  
շ, ճ, մ, յ, ն, շ, ո, չ, պ, ջ, ու, ս, կ, տ, ր, յ, ւ, փ,  
ք, հ, օ, ֆ:

w, p, q, t, b, q, t, l, թ, ժ, h, l, լ, լս, ծ, կ, հ, ձ,  
շ, ճ, մ, յ, ն, շ, ո, չ, պ, ջ, ու, ս, կ, տ, ր, յ, ւ, փ,  
տ, ր, յ, ւ, փ, ք, հ, օ, ֆ:

w, p, q, դ, ե, զ, տ, լ, թ, ժ, հ, լ, լս, ծ, կ, հ, ձ,  
շ, ճ, մ, յ, ն, շ, ո, չ, պ, ջ, ու, ս, կ, տ, ր, յ, ւ, փ,  
տ, ր, յ, ւ, փ, ք, հ, օ, ֆ:

Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Լ, Թ, Ժ, Ի, Խ, Ծ, Կ, Շ, Ո, Ռ,  
Շ, Լ, Ճ, Մ, Յ, Ն, Շ, Ո, Շ, Պ, Վ, Կ, Տ, Ծ, Ռ,  
Ց, Հ, Փ, Ք, Օ, Ֆ:



ՀԱՅԵՐԻՆ ԳՐՉԱԳԻՐ Ս. ՅԱՌՈՒԲԵՆԻ

w, r, q, y, f, y, t, o, p, l, p, f,

*fu, ð, ɿ, h, ɿ, ɿ, þ, ʃ, ʃ, j; ɻ, ɿ,*

*n, e, a, g, q, n, u, f, qn, p, y, l,*

phi, f, b, o, phi:

*U, f, q, p, t, 2, f, p, ff,*

T, p, l, Jr, S, h, h, L, n, S,

aff. J. E. B., N. J., M. D.,

N. U. of N. P. Y. I.

ph. P. O. P. - e

*Yiu qm pp fn hopl n r espz. ap f/g rau*

թիւ ժիկ և յուսայնաց այ ժիկս ի ը

# ԳՐԻՓ ՎՐԱՅ:



ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

# ԱԹԵՀԻՆ ԸՆԹԵՐՑԱՐԵՆ ԱՅԲՈՒԲԵՆԻՑ ՅԵՏՈՅ.

## 1. *U n u h o s*

Հուսացաւ, լուսացաւ, լոյսն է բարին, ծիտն է ծառին, հաւն է թառին։ Աշխատաւո՞ր, վեր կաց բանի. ծոյլ տղայի քունիր կրտանի։

## 2. *U k u l u l*



Դու ինձ ասա, աքաղաղ, ոսկէ կա-  
տարիդ մատաղ, կարմիր մօրուքիդ մա-  
տաղ. ինչո՞ւ ես շուտ արթնանում, բար-  
ձրբարձր երգ ասում, քաղցր քունս  
խանգարում:

### 3. ՔԱԶ ՃՈՒՆ

— Ճնիկ, ինչու ես հաշում:  
 — Գայլերին եմ վախեցնում:  
 — Ճնիկ, ինչու պոչդքեղ քաշեցիր:  
 — Գայլերից եմ վախենում:



### 4. ԲԱՐԻ ՃՈՒՆ

Ճունը պահպանում էր խր տիրոջ տունը: Նա տեսաւ մի աղքատ մարդու և սկսեց նրա վրայ հաշել:  
 — Միրելիս, — խնդրեց աղքատը, —  
 խղճա ինձ ահա երեք օր է, որ ոչինչ չեմ կերել:  
 — Ես էլ նրա համար եմ հաշում, — պատասխանեց  
 շունը, — որ մարդիկ լսեն ձայնս և քեզ կերակրեն:




### 5. ԾԻՑԸ ԵՒ ԲԱԶԻՆ

Ծիցը ծառին ծըլվրում է  
 ծիւ, ծիւ, ծիւ:  
 Բազին գլխին պտըտում է,  
 Վ՛յ, վ՛յ, վ՛յ:  
 Ծիցը լոեց, ծիցը վախեց,  
 Վայ, վայ, վայ:



Բազէ, թըռռռ, բազէ, թըռռռ,  
 Հայ, հայ, հայ:  
 Բազին թռաւ,  
 Բազին փախաւ,  
 Ի՞նչ լաւ եղաւ,  
 Հէյ, հէյ, հէյ:

Ծիտիկ-միտիկ, պիծիկ-միծիկ,  
 Պըտպըտուրիկ, չըլպըտուրիկ,  
 Դու լաւ պրծար չար բազէի  
 Սուր ճանկերից, հա, հա, հա:



### 6. ԿԱՏՈՒՆ ՈՒ ՃՈՒՆԸ

Որսկան շունը մի նապաստակ էր բռնել: Կատուն  
 այդ որ տեսաւ, շանը նախատեց ու ասաց. „Ի՞նչ ան-  
 գութն ես“: Հէնց այդ ըովէին մի վոքրիկ մուկը ծա-  
 կից դուրս եկաւ և վազելով անցաւ նրանց առաջից:  
 Կատուն վրայ հասաւ, բանեց ու կերաւ: Ճունն ասաց.

— Այդ ի՞նչ ես անում։ Դու ինձ նախատում ես, որ  
ես մի նապատակ եմ բռնել իմ տիրոջ համար, իսկ  
ինքդ մուկն ես բռնում ու անուշ անում։

— Ե՞ս, ոչինչ, իմ կերածը մի չնչին մուկն է, — պա-  
տասխանեց կատուն։

Քո աչքի գերանը թողած, ուրիշի աչքի շիտն ես պտղում։

### 7. Կ Ա Տ Ո Ւ

Կատուն եկաւ, փիսի՛կ-փիսի՛կ,  
Հաղար նազով՝ ինչպէս հարսիկ.  
Դունչը սրբեց թաթիկներով,  
Մազը սանրեց շանչիկներով։  
— Կատուն, կատուն, է՛ք ես տրտում։  
Թէ՛ մկներն են այսօր արթուն։

### 8. Դ Ե Ղ

Փոքրիկ Աննայի մտյրը հիւանդացաւ և բժիշկը  
նրան մի զառը զեղ տուեց խմելու։ Աղջիկը տեսաւ, որ  
մայրը զժուարութեամբ է խմում զեղը, ասաց նրան.  
— Մայրիկ, տուր, ես խմեմ քո փոխարէն։

### 9. Խ Ե Լ Ա Ց Ի Ս Գ Ո Ս Ի Ղ

Ագռաւը ծարաւ էր։ Նա շատ դէսուղէն ընկաւ և  
  
վերջապէս դաշտում տեսաւ  
մի կճուճ, որի մէջ ջուր կար.  
բայց ջուրն այնքան ցած էր,  
որ ագռաւը չէր հասնում։ Նա  
սկսեց մանր քարեր զցել  
կճուճի մէջ. այդպիսով ջուրն  
այնքան բարձրացաւ, որ նա  
խմեց, ծարաւը կոտրեց և թռաւ, իւր գործին զնաց։

### 10. Մ Ա Ն Ո Ւ Կ Ն Ե Ր Ն Ո Ւ Գ Ո Ր Տ Ե Ր Լ

Մանուկները խաղում էին գետի ափին և յանկարծ  
տեսան, որ ջրում շատ գորտ կայ։ Նրանք քարեր հա-  
ւաքեցին և սկսեցին մէկ-մէկ քարկոծել զորտերին։ Երե-  
խաները սաստիկ ուրախանում էին։


Մի գորտ գլուխը զուրս հանեց ջրից ու ասաց.  
— Մանուկներ, բաւական է քար զցէք. դա ձեզ հա-  
մար խաղ է, իսկ մեզ համար — մահ։

Առած.— Կատուն խաղ է, մկանը մահ է։



### 11. ԱՐԵՒ

Արեւ, արեւ, եկ, եկ,  
Նախշուն քարին վեր եկ,  
Մեր ոչխարին մտիկ արա,  
Որ գայլը գայ, իմաց արա:




### 12. ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

Փոքրիկ մանուկը միշտ տեսնում  
էր, որ հայրը գիրք կարդալիս ակ-  
նոց էր դնում աշքերին: Մի օր էլ  
նա խնդրեց հօրը.

— Հայրիկ, ինձ համար էլ ակնոց  
գնիր, ես էլ ուզում եմ քեզ պէս գըր-  
քեր կարդալ:

— Լաւ, — պատասխանեց հայրը. —  
Ես քեզ համար մանկական ակնոց կը գնեմ: — Եւ որդու  
համար գնեց մի այբբենարան:

Առած. — Ով կարդայ, նա մարդ ա:



### 13. ԿԱՐԴԱԼ — ԳՐԵԼ

Երբ որ լեզուս բացուեցաւ,  
Ազատ խօսիլ սովորեցայ,  
Քարի մօրս ձեռքի տակ,  
Գրել — կարդալն սկսայ:  
Ճատ ժամանակ շանցկացած,  
Այլևս գիր կարդալը

Այնպէս դժուար չէր թւում,  
Ինչպէս կ'ասեն ծոյլերը:

Այնուհետեւ ինձ համար  
Հոլ, վէգի, գնդակի շափ  
Սիրելի են թուղթ, գրիչ,  
Գիրք, քանոն, մատիտ, տետրակ:



### 14. ԳԱՍՏԱԽԻՆ

Դասատան մէջ նստած են աշակերտները: Աշ-  
կերտների առաջ նստած կամ կանգնած է վարժապե-  
տը: Վարժապետը սովորեցնում է: Աշակերտները սո-  
վորում են: Դասատան մէջ աշակերտները կարդում են,  
գրում են, հաշում են, նկարում են: Աշակերտների  
դէմ դրած է մի մեծ գրատախտակ: Գրատախտակի  
մօտ կան կաւիճ և սպունգ: Գրասեղանների վրայ դրած  
են կասական առարկաներ — գիրք, տետրակ, քարե-  
տախտակ, քարեգրիչ:

Դասական առարկաներ. — Գիրք, տետրակ, քարետախտակ, գրչակոթ,  
գրիչ, մատիտ, քարեգրիչ, քանոն, թանաքաման, սպունգ:  
Խաղալիքներ. — Գնդակ, տիկնիկ, բզզան, վէգ...

ԳՐԱԿԱՆ ՎԵՐՓՈԽԹԻՒՆԵՐ

1. Սրտագրեցէք, այս բառերը և ձայնաւոր տառերի տակ զիծ բաշեցէք: Յետոյ առանձին գրեցէք ձայնաւոր տառերը:

Աղ: Մաղ: Եզ: Էշ: Գերի: Գինի: Ընկեր: Մուկը: Ուղի: Օրիորդ: Ուղտ: Շոմ: Կատու:

2. Գրեցէք հայերէն այրութենի բոլոր բաղաձայն տառերը:  
բ, գ, դ...

3. Լքացրէք այս վարժութիւնը:

Գիրքը դասական առարկայ է: Գնդակը խաղալիք է: Մատիտը... Գրիշը... Վէզը... Տետրակը... Տիկնիկը... Բզզանը... Քարետախտակը...


15. ՍԱԳԻԿ

Սագիկ—մագիկ,	Երբ մեծանաս,
Եմ սիրունիկ,	Մեծ սագ դառնաս,
Ես քեզ կըտամ	Ես կըխնդրեմ
Քաղցը կուտիկ,	Իմ մայրիկիս,
Որ դու ուտես,	Որ նա ժողուէ
Ջուտ մեծանաս,	Քո վիետուրներ
Ուրախ ապրես,	Եւ ինձ համար
Զուարճանաս:	Հինէ բարձեր:

Կեր, իմ սագիկ,  
Կեր, սիրուրիկ,  
Որ մեծանաս,  
Մեծ սագ դառնաս:

16. ՍԱԳԻԿ ՈՒ ԱՐԱԳԻԼԸ

Լողում էր սագը լճի երեսին, լողում էր և այս-  
պէս խօսում ինքն իրան.



— Ճշմարիտ, ի՞նչ զարմանալի  
թռչուն եմ ես: Գետնի վրայ  
ման եմ զալիս, ջրումը լողանում,  
օդումը թռչում: Ինձ նման ուրիշ  
թռչուն չկայ աշխարհիս երեսին:

Արագիլը լսեց սագի խօսքերը և ասաց նրան.

— Ճատ յիմար թռչուն ես զու, սագիկ: Որ ալդ-  
քան պարծենում ես, ապա, ասա, տեսնեմ, կարող ես  
ձկան պէս լող տալ, եղջերուի պէս վազել կամ արծուի  
պէս թռչել: Աւելի լաւ է մի բան իմանալ և հիմնաւոր,  
քան թէ շատ բան և բոլորն էլ թերի:



17. ԲԱԳԻԿ

— Բագիկ, բագիկ,  
Կարմիր թաթիկ,  
Ուր ես զնում կամաց-կամաց,  
Զագուկներդ չորս կողմդ առած:  
— Ես զնում եմ ջուր գտնելու,  
Զագուկներս լուանալու,  
Զագուկներս մաքուր-մաքուր,  
Տղոց երեսն աղտ է ու մուր:

### 18. ՍՏԱԽՈՍ ՀՈՎԻԻ Ը

Մի փոքրիկ հովիւ սովորութիւն էր արել խաբել իւր ընկերներին։ Ջատ անգամ նա երկիւղալի ձայնով կանչում էր.

—Գայլը եկաւ, գայլը եկաւ։

Հովիւները գալիս, տեսնում էին, որ գայլ չկայ։ Իսկ ստախօս մանուկը ծիծաղում էր նրանց վրայ։

Մի օր էլ այս հովուի հօտի վրայ մի գայլ յարձակուեցաւ։ Նա սրտապատառ սկսեց կանչել.

—Գայլը եկաւ, գայլը եկաւ։

Ընկերները կարծեցին, թէ էլի խարում է, տեղերիցը շշարժուեցան։ Գայլը նրա հօտի մէջ ընկաւ և պատառուից ոչխարներին։

Առած.—Սուտ ասողի տունը կը ակ ընկաւ, ոչ ոք չհաւատաց։

### 19. ՀՈՎՈՒԻ ԱՆԿՈՂԻՆԸ

Սարի լանջը մահճակալ,  
Զեշոտ քարը գլխակալ,  
Մի հին կարպետ ուսերին, —  
Եյս է հովուի անկողին։  
Երբ անձըն է կաթկաթում  
Եւ կարպետը թըլսկթըլսկում,  
Հովին անուշ քնի մէջ  
Քաղցը երազ է տեսնում  
Եւ խնդում,  
Ծիծաղում...

Ուխայ, ուխայ, սիրուն հովիւ, քունդ անուշ։

### 20. ՃԵՄԱՐՏԱԽՕՍ ՄԱՆՈՒԿԸ

Մանուկին մի փոքրիկ ուրագ ընծայեցին։ Նա այնքան ուրախ էր, որ ձեռքն ընկածը կոտրատում, փշացնում էր։ Մանուկը մինչև անգամ կտրեց մի ծառ, որը նրա հայրը տնկել էր այգում։ Երբ որ հայրը տեսաւ փշացրած ծառը, սաստիկ տիսրեց և հարցրեց որդուն.

—Ո՞վ է կտրել այս ծառը. Ես պէտք է խիստ պատժեմ յանցաւորին։

—Ի՞նձ պատժիր. Ես եմ արել այդ, — պատասխանեց մանուկը։

—Այս ծառը շատ սիրելի էր ինձ, — ասաց հայրը, — բայց քո ճշմարտախօսութիւնն ամեն բանից թանկ արժէ։ — Եւ նա գրկեց ու համբուրեց որդուն։

### 21. ԿՈՅՐԸ

Մի անգամ, գիշերը, մի կոյր մարդ մէկ ձեռքում կծուճով կաթ, իսկ միւսում մի վառած լապտեր ըլունած, կամաց-կամաց առաջ էր գնում։ Ճանապարհին նրան պատահեց մի երիտասարդ և ասաց.

—Այ յիմար մարդ, ինչի՞դ է հարկաւոր այդ լապտերը. չէ՞ որ դու ոչինչ չես տեսնում։


—Այս լապտերը ես վերցրել եմ քեզ նման խելացի մարդկանց համար, որ նրանք չղիպշեն ինձ և կաթս շթափեն, — պատասխանեց կոյրը։

Առած.—Կոյրն ինչ կ'ուզէ—ջուխտ աշքով լրյա։

## 22. ԿԱՐԱՍԻՆԵՐ

Ամեն մի տան մէջ կարասիներ կան — սեղաններ, աթոռներ, պահարաններ, մահճականներ: Կարասիները շինում են փայտից և ներկում են, որ չփշանան և գեղեցիկ լինին: Աթոռների նստելատեղերը շատ անգամ փափուկ կտորով են ծածկուած լինում: Կարասիները շինում են ատախագործները:

Կարասիներ: — Սեղան, աթոռ, պահարան, բաղմոց, բազկաթոռ, մահճակալ, նստարան, գզրոց, դարձակ:



### ԳՐԱԿԱՐԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

4. Արտազրեցէք այս միավանկ բառերը:

Օր: Եզ: Խաղ: Մաղ: Արջ: Հայր: Զայն: Հող: Բանդ: Խաւ: Եշ: Քար: Մուրճ: Դուր:

5. Գրեցէք ձեզանից միբանի միավանկ բառեր:


6. Վանկեցէք այս բառերը:

Ա-նի: Աղի: Եթէ: Եղան: Արա: Ռողին: Իրան: Օղակ: Կաշի: Կողակ: Մեղու: Շաքար: Կօշիկ:

7. Լրացրէք այս գարժութիւնը:

Դիրքը դասական առարկայ է, իսկ սեղանը... Բզզանը խաղալիք է, իսկ բազմոցը... Նստարանը կարասի է, իսկ թանաքամանը... Քանոնը դասական առարկայ է, իսկ պահարանը... Մահճակալը կարասի է, իսկ սպոնզը...

## 23. ԵՐԿՈՒ ԱՅՃ



Առուակի վրայով մի նեղ գերան էր զյած անցուղարձ անելու համար: Մի անգամ երկու այծ պատահեցան այդ գերանի վրայ: Երկուսը մի անգամից չէին կարող անցնել. պէտք է մէկը յետ դառնար և միւսին ճանապարհ տար: Բայց ոչ մէկը չէր ուզում այդ անել: Նրանք սկսեցին վիճել:

— Դու յետ քաշուիր, — ասաց մէկը. — առաջ ես եմ բարձրացել գերանի վրայ:

— 2Է, — վրայ բերեց միւսը. — թնդ, որ առաջ ես անցնեմ. ես քեզանից մեծ եմ:

Եւ այծերը, ճակատ - ճակատի տալով, սկսեցին կուտել: Հակառակի պէս գերանը թաց էր: Կոռւցին, կոռւցին և երկուսն էլ թըրըմպալով ջուրը թափուեցան:

## 24. ՊԱՌԱՒՆ ՈՒ ԱՅՃԸ

Կար-չկար երբեմն

Մի աղքատ պառիկ,

Ունէր մեր պառաւը

Կաթնատու այծիկ:

Չալիկ-մալիկ

Կաթնատու այծիկ:

Պառաւը ձմեռը

Այծիկը պահեց,

Իւր բերնի պատառը

Նրա հետ կիսեց:

Միրով-յօժար

Նրա հետ կիսեց:

Չիւնը հալուեցաւ,

Բըսաւ կանաչ խոտ,

Պառաւն այծիկը

Դուրս տարաւ արօտ:

Ուրախ-զուարթ	Մոլորուտծ այծիկը
Գուրս տարաւ արօտ:	Բարձր մըկըկաց:
Թանձր մառախուղը	Մըկը՝կ, մըկը՝կ,
Գետինը պատեց,	Այծը մըկըկաց:
Պառաւի առջեից	Գայլը մօտ եկաւ,
Այծը կորցրեց:	Այծին շալակեց,
Ափսոս, ափսոս,	Պառաւը յետևից
Այծը կորցրեց:	Բարձրաձայն դոչեց՝
Պառաւը լաց եղաւ,	Հարայ—հայ—հարայ,
Իսկ գայլը օռնաց,	Բարձրաձայն դոչեց:
 Խեղճը մնաց կանգնած	 Խեղճը մնաց կանգնած
Մի փունջ խոտ ձեռին,	Անմիխթար ձայնով
Անմիխթար ձայնով	Կանչելով այծին՝
Կանչելով այծին՝	Ե՛կ-Ե՛կ, Ե՛կ-Ե՛կ
 Կանչելով այծին:	 Կանչելով այծին:

### 25. ԲԱՐԻ ԳԻՒՂԱՑԻՆ

Գիւղում մի աղքատ ընտանիք էր ապրում—հայր, մայր և երկու տղայ: Դրանց ազգականը մեռաւ և մի որբ աղջիկ թողեց: Նրանք այդ աղջկան բերին, իրանց տանը պահեցին:

Կինն ասում էր մարդուն.

—Այ մարդ, Սշխէնին որ մեզ մօտ վերցրինք, մեր վերջին կոպէկն էլ նրա վրայ կըգնայ. աղի փող էլ չի մնալ, որ աղ առնենք, կերակրին խառնենք:

—է՛հ ոչինչ, — պատառխանեց մարդը, — մենք էլ կերակուրն առանց աղի կուտենք:  
Առած,—Աղ ու հաց, սիրտը բաց:

### 26. ՈՐԲԻԿ

Փայլուն արել արդէն մայր մտաւ,  
Լուսինն էլ վաղուց գնաց, թաք կացաւ.  
Գիշերուայ մութը աշխարհս պատեց  
Եւ աշնանային ցուրտ քամին փչեց:

Ամեն մարդ քաշուեց իւր տունը մտաւ,  
Ամեն երեխայ մօր զիրկն ընկաւ:  
Միայն մի խեղճ որբ, որ չունէր հայր, մայր,  
Ոչ մի աղգական, ոչ քոյր, ոչ եղբայր,  
Ոտքերը բորիկ, տկլոր ու քաղցած,  
Մի տան պատի տակ մնաց կուճ եկած:

Բարի տանտէրը վերեկից նայեց,  
Մեր թշուառ որբին ներս հրաւիրեց.  
Եւ այնուհետև տարաբաղդ տղան  
Ունէր իւր համար տէր ու տիրական:



## 27. ՈՒՏԵԼԻՔ ԵՒ ԽՄԵԼԻՔ

Սուանց ուտելիքի մարդը կըմեռնի քաղցից։ Սուանց խմելիքի նա կըմեռնի ծարաւից։ Մարդու ամենահարկաւոր կերակուրը — հայն է, իսկ ամենահարկաւոր խմելիքը — մաքուր ջուրը։

Առածներ. — Հաց ու պանիր, կեր ու բանիր։ Մի բաժակ ջուր ով ուզի՝ տուր։

Ուտելիք։ — Հաց, սպաս, փլաւ, տապակած...

Խմելիք։ — Ձուր, կաթն, թէյ, սուրճ, գինի, գարեջուր, օղի...

## 28. ԳՈՅՆԵՐ

Զիւնն սպիտակ է։ Ածուխը սև է։ Մոխիրը գորշ է։ Ոսկին զեղին է։ Խոտը կանաչ է։ Երկինքը կասրոյտ է։ Սրինը կարմիր է։

Կաթը, մածունը, թանը սպիտակ են։ Թանաքը սև է։ Ամպերը գորշ են։ Պղինձը զեղին է։ Ծառերի տերևները կանաչ են։ Մանուշակը կասրոյտ է։ Վարդը կարմիր է։

## 29. ՄԵՐ ՍԵՆԵԱԿ

Մեր սենեակն ունի յատակ, առաստաղ և չորս սպատ։ Պատերն ու առաստաղը սպիտակ են. յատակը ներկած է կարմիր գոյնով։ Պատերի մէջ շինած են գոյներ և լուսամուտներ։ Սենեակում կան վառարան, սեղան, աթոռներ, պահարան և գարակներ։ Պահարա-

նի մէջ մենք պահում ենք մեր ամանները։ Դարակներում զնում ենք մեր սպիտակեղինը, իսկ մահճակալի մօտ պատից կախուած են մեր հագուստները։

Ամաններ. — Բաժակ, ափսէ, ջրաման, լմպանակ, շիշ, կուժ, կաթսայ, ինքնանու, թէյաման։

Հագուստներ. — Ապիկ, սպիտակեղին։ — Վերարկու, բաճկոն, շապիկ, մուշտակ, գուլպայ, թաշկինակ, անդրավարտիք, երեսօրբիչ, սաւան։

## ԳՐԱԿԱՂԱՎԱՐ ՎԵՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

### 8. ԱՐՄԱԳՐԵԳԵՇՌ այս երկավանկ բառերը։

Կա-տու։ Քաղաք։ Երկինք։ Երկիր։ Ոզնի։ Թանաք։ Գիտուն։ Գունատ։ Եղէզ։ Երկար։

### 9. ԳՐԵԳԵՇՌ ՃԵՂԱՆԻՑ միքանի երկավանկ բառեր։

### 10. ԱՐՄԱԳՐԵԳԵՇՌ այս բաղմավանկ բառերը։

Գիւղացի։ Քաղաքացի։ Աշակերտ։ Ժամանակ։ Զաւակասէր։ Զինուորական։ Մանկական։ Ժամանակատը։ Ընտանի։

### 11. ԼՐԱԿՐԵՔ այս վարժութիւնը։

Հացը ուտելիք է, իսկ բաժակը... Վերարկուն հագուստ է, իսկ երեսօրբիշը... Սասանը սպիտակեղին է, իսկ գինին... Տապակածը ուտելիք է, իսկ թէյը... Շապիկը սպիտակեղին է, իսկ ինքնաեռը... Աթոռնկարասի է, իսկ շիշը... Ջուրը խմելիք է, իսկ կուժը...

## 30. ԱՆՁՐԵՒ

Անձրե՛, անձրե՛, ցած արի,  
Բըսցուր ցորեն ու զարի,

Բըսցնւը ծաղիկ, կանաչ խոտ,  
Աւլէ վոշի, մաքրէ օդ:  
Անձրե՛, անձրե՛, ցած արի,  
Դալդ ամենիս բարի:

### Յ1. ԸՆՏԱՆԻ ԵՒ ՎԱՅՐԵՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Հաւը մեզ համար ձու է ածում և տանից չի հեռանում. իսկ կաքաւը, սարեակը, ծիծեռնակը ազատ թռչուններ են. Նրանք, ուր ուզում, թռչում, գնում են: Ճունը պահպանում է ոչխարների հօտը և մարդկանց տները, հաւատարիմ ծառայում է մարդուն: Իսկ գայլը, աղուէսը շրջում են անտառներում, մտնում են գիւղերը, ոչխար, հաւ ճանկում ու տանում, լափում են: Կովը մեզ համեղ կաթն է տալիս, եզն ու ձին օգնում են գիւղացուն աշխատանքի ժամանակ, իսկ արջը կատաղի գազան է, մարդուն թշնամի: Հաւը, շունը, կովը ձին, ոչխարը — ընտանի կենդանիներ են, իսկ կաքաւը, գայլը, աղուէսը, արջը — վայրենի:

Էնտանի կենդանիներ: — Ձի, կով, խող, կատու, շուն, ոչխար, այծ, ուզա, էն, գոմէշ:

Վայրենի կենդանիներ: — Արջ, աղուէս, գայլ, առիւծ, վագր, նապաստակ, ճագար, սկիւռ:



### Յ2. ԳԱՌՆՈՒԿ

Միրուն, անմեղ իմ զառնուկ,  
Բուրդդ սպիտակ ու փափուկ,  
Դաշտ վազելով ու արօտ,  
Մօրդ քաշում ես կարօտ:

Մի լար, գառնուկ սիրական,  
Փոքրիկ տղի դու նման.  
Կըգայ մայրդ, հետը շատ  
Կըբերէ քեզ անուշ կաթ:

### Յ3. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՎԵՃՐ

Կովը, եզը և շունը վիճում էին միմեանց հետ,  
թէ իրանցից որին տէրը շտա է սիրում:

— Իհարկէ նա ինձ ամենքիցդ շտա է սիրում, — ասաց եղը, — ես նրա արօրն ու գոթանն եմ քաշում, նրա համար փայտ եմ կրում: Նա ինձ լծում է սայլին, ցորենը ջրաղաց տանում, աղում է, քաղաքում ծախում ե իրան ասլրուստը անում: Ես որ չլինիմ, նա ինչ պէս կարող է ասլրել:


— Զէ, նա ինձ է շտա սիրում, — վրայ բերեց կովը. — Ես նրա ընտանիքը կաթնովս եմ կերակրում: Այն մա-

ծունն ու կաթը, այն սերն ու կարագը, այն իւղն ու պանիրը, որ նրանք վայելում են, ում տուածն է: Եթէ ես չլինիմ, բոլորը քաղցած կըկոտորուին:

— Զէ, չէ, ինձ երկսիցդ էլ շատ է սիրում, — օռնաց շոնը, — ես նրա ունեցած-չունեցածն եմ պահպանում:

Տէրը լսեց նրանց այս վէճը և ասաց.

— Բաւական է վիճէք. զուք չգիտէք, որ ամենքդ էլ ինձ հարկաւոր էք և ոչ մէկդ միւսի արածը չէք կարող անել: Այդ պատճառով ես ձեզ ամենքիդ էլ սիրում եմ, դուք էլ սիրեցէք միմեանց:



#### 34. ՏԱՏՆ ՈՒ ԿՈՎԸ

— Արի, իմ կովիկ,  
Հազրել եմ կովկիթ,  
Պըպըկեմ տակիդ,  
Քաշեմ քո սլտիկ:

Մի վախիը, կովիկ,  
Հորթիդ կըտամ կաթ,  
Նրա համար մաս  
Ես կըթողնեմ շատ:

Կովը լի կուրծքը  
Բացեց համարձակ,  
Կաթը վեր թողեց  
Իւր կրծքից արձակ:

Բայց անգութ տատը  
Քաշեց ու մզեց,  
Հորթուկի համար  
Կաթիւ շթողեց:

#### 35. ԳԱՌՆԵՐՆ ՈՒ ԳԱՅԼԸ

Ոչխարների հօտն արածում էր անտառի մօտ. Երկու գառը հեռացել էին հօտից և ուրախ-զուարթ խաղում էին ծառերի մէջ:

— Զարութիւն մի անէք, գառնուկներ, — ասաց մի պառաւ ոչխար, — կարող է մի փորձանք պատահել:

— Ոչխարը սուտ է խօսում, — թփերի միջից ձայն տուեց գայլը. — Նա պառաւ է և չի կարող ձեզ պէս խաղալ ու թռչկոտել, զրա համար էլ նախանձում է ձեզ: Որքան ուզում էք, վազվեցէք այս գեղեցիկ անտառի մէջ:

Յիմար գառներն այդպէս էլ արին. Նրանք թողին, հեռացան հօտից: Գայլի ուզածն էլ այդ էր: Նա բռնեց գառներին ու կերաւ:



#### 36. ԿՈՐԱԾ ՀՈՐԹԸ

Զիմ էր գալիս փաթիլ-փաթիլ,  
Հետն էլ անձըն՝ կաթիլ-կաթիլ.  
Այդ միջոցին մի պառաւ կին  
Հորթն էր փնտրում դաշտի միջին:

Կովը եկաւ տաւարիցը,  
Կուրծքն ու ծծեր կաթնով լիքը.  
«Հորթուկս ուր է», նա բառաշեց,  
Խեղճ պառաւին լայացրեց:

Մինչդեռ այսպէս պառաւ ու կով  
Ողբում էին լաց ու կոծով,  
Յանկարծ լսուեց մի բարակ ձայն.  
Կովն իմացաւ, որ հորթն է այն:

Կովը վազեց բառաշելով,  
Պառաւը գնաց տընքտընքալով.  
Կորած հորթը մօրը գտաւ,  
Լիք ծծերը բերանն առաւ:

Եծեց բոլոր կաթն ու տողեց,  
Տանտիկնոչը բան շթողեց.  
Բայց պառաւն այս անգամին  
Սիրով ներեց շար հորթուկին:

### 37. ԽՈՏԱԿԵՐ ԵՒ ՄՍՍԿԵՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Գայլը շատ անգամ ոչխարներ ու հորթեր է լափում:  
Աղուէր սիրում է հաւի միս անուշ անել: Ճներն ու  
կատուներն էլ միս են սիրում: Բայց այդպէս չեն կո-  
վերը, ձիերը, այծերը, ոչխարները, նապաստակները:  
Կովերն ու ձիերը ամառը կանաչ են ուտում, իսկ  
ձմեռը—խոտ: Նապաստակը ձմեռը ծառերի արմատ-  
ներն է կրծում, իսկ գարունն արածում է մարգագետին-  
ներում: Ահա թէ ինչո՞ւ կենդանիներից միքանիսին մենք  
խոտակեր ենք անուանում, իսկ միւսներին — մոակեր:

Ի՞նչ խոտակեր եւ մոակեր կենդանիներ էք տեսել:

ԳՐԱԿԱՐԱԿԱՐԱՔԻՒԹԻՒՆԵՐ

12. Գրեցէք ձեղանից միքանի բաղմականկ բառեր:

13. Վանկեցէք այս բառերը:

Կը-տոր: Մնալ: Գնալ: Մըկ-բատ: Կտրել: Խնդիր: Զնծաղիկ:  
Թոշոնի: Թշնամի: Խնձոր: Մանր: Կայսր: Ծոնր: Բարձր:

14. Լրացրէք այս վարժութիւնը:

Իմ գիրքը — գիրքս: Քո գիրքը — գիրքո: Նրա գիրքը —  
գիրքն (գիրքը): Իմ մայրը — մայր+: Քո մատիտը — մատիտ+:  
Քո զլուխը — զլուխ+: Իմ գրիչը — գրիչ+:

15. Լրացրէք այս վարժութիւնը:

Զին ընտանի կենդանի է, իսկ աղուէսը... Արջը վայրենի  
կենդանի է, իսկ կովը... Խոզը... Գայլը... Առիծը... Վագը...  
Շունը մսակեր կենդանի է: Այծը... Ոչխարը... Էշը... Գայլը...  
Առիծը... Ռողտը... Զին... Արջը...

16. Լրացրէք այս վարժութիւնը:

Թուղթը սպիտակ է: Երկինքը... Զինը... Կուպը... Վարու...  
Մանուշակը... Արինը... Կարագը... Լեղակը... Մորը... Ժուկը:



### 38. ՆԱՊԱՍՏԱԿ

Մի վաղիր այդշափ արագ,  
Իմ սիրունիկ նապաստակ,

Ճատ փոքրիկ ես տակաւին,  
Թաթիկներդ կըյոգնին:  
  
Քեզ կըբերեմ կաթն ու հաց  
Ճաքրեջրով համեմած.  
Ուտես, խմես, զօրանաս,  
Բանից կարօտ չմաս:  
  
Ֆանը-ծանը կըբայլես,  
Միրտս վեր-վեր կըհանես.  
Կարձակեմ քեզ, երբ ուզես,  
Կերթաս, ազատ կարածես:

### 39. ԳԱՅԼՆ ՈՒ ԱՅԾԸ

Բարձր, քարքարոտ սարի զլիսին արածում էր  
վայրենի այծը, իսկ ներքեր, սարի տակ, քաղցած  
զայլն էր թափառում: Նա ձայն տուեց այծին.

— Ինչու ես այդ քարերի մէջ արածում, սիրելի  
այծիկ. ցած արի, այստեղի կանաչ, հիւթալի խոտը  
վայելի՞ր:

— Հիւթալի խոտը քեզ համար պահիր, զայլ եղ-  
բայր, — պատասխանեց այծը. — Ինձ այստեղ էլ քա-  
րական կերակուր կայ:

Առածներ. — Գայլն ամպ օքը կորախանայ: — Գայլն ընկաւ  
ոչխարի մէջը, վայ մէկի տիրոջը:

### 40. Թ Ո 2 Ո Ւ Ն Ե Ր

Բարձր ամպերի միջից թոշում է արծիւր: Մրա-  
տես աշքերը չորս արած, նա որս է որոնում: Ցան-

կարծ նետի պէս յարձակում է մի որևէ կենդանու  
կամ թոշունի վրայ, յափշտակում է նրանց և ճանկերի  
մէջ առած՝ իւր բունն է տանում: Բազէն էլ արծուի  
նման գիշատող թոշուն է: Բայց այդպէս չեն մեր  
ընտանի թոշունները — հաւերը, բաղերը, սագերը, հնդ-  
կահաւերը: Նրանք կերակրում են հատիկներով, բգէզ-  
ներով, որդերով և հացի փշրանքներով: Մարդիկ նրան-  
ցից շատ օգուտներ են ստանում: Փոքրիկ ծիծեռնակը,  
ղեղձանիկը, արտուտիկը, քաղցրածայն սոխակը գուար-  
ճացնում են մեզ իրանց երգերով: Մարդիկ նրանց  
երգող թոշուններ են անուանում:

Ընտանի թոշուններ: — Հաւ, սագ, բագ, հնդկահաւ, աղանի:  
Դիշատող թոշուններ: — Արծիւ, ցին, բու, բաղէ, ագռաւ:  
Երգող թոշուններ: — Սոխակ, ղեղձանիկ, արտուտ, սարեակ, ծիծեռնակ:

### ԳՐԱԿԱՐԱՎԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

#### 17. Լրացրէք այս վարժութիւնը:

Սագ — սագիկ: Բաղ — ... Հաւ — ... Կուտ — ... Շոն — ...  
Բուն — ... Այծ — ... Մայր — ... Հայր — ... Քոյր — ...  
Տոն — տնակ: Թոշուն — ... Գունդ — ... Նաւ — ...

#### 18. Վանկեցէք հետեւալ բառերը:

Հզ-զոյշ: Սպունզ: Զզալ: Զմայլել: Շտապել: Ստանալ: Սպա-  
սել: Սպանել: Ստոր: Շտեմարան:

#### 19. Գրեցէք և տառի տակ գիծ քաշեցէք:

Հաւ: Կաւ: Նաւակ: Թագաւոր: Հիմնատը: Տարաւ: Կերաւ:  
Եկաւ: Թիւ: Անիւ: Ազնիւ:

20. Արտակբեցէ՛ք և զ տառի տակ գիծ ըաշեցէ՛ք:

Վարդ: Վերմակ: Վարդան: Ով: Ովկիանոս: Նասավար: Կառավարել: Զօրավար: Գրավաճառ:

21. Առանձին խմբերի բաժանեցէ՛ք:

Սագ: Բու: Մատիտ: Վազր: Եզ: Բաղ: Գիրը: Սոխակ: Գընդակ: Բազմոց: Քանոն: Տիկնիկ: Մահճակալ: Աթոռ: Սպոմազ: Վէզ: Վերաբերություն: Երեսարքիչ: Շապիկ: Գուլպայ: Թաշկինակ: Բաժակ: Կաթսայ: Ինքնաեռ: Թանաքաման: Հաց: Տապակած: Սուրճ: Դինի: Օղի: Սպաս: Փլաւ:

#### 41. ԹՌՉՆԱԿԻ ԲՈՒԽԸ



Մանուկներն իրանց պարտիզում մի թոչնի բուն գտան: Այնտեղ նստած էին երկու փոքրիկ, մերկ ձագուկներ: Մանուկները վեր առան նրանց և բերին տուն: Հայրն ասաց նրանց.

— Զաւակներս, դուք շատ վատ բան էք արել. դուք զիտէք, թէ որքան կըտխրեն ու կըշտանան սրանց ծնողները, երբ իրանց ձագուկներին չգտնեն բնի մէջ: Բացի գրանից, սրանք շուտով կըսատակեն, որովհետեւ դուք չէք կարող կերակրել:

Մանուկները սաստիկ խղճացին ձագերի վրայ և նրանց յետ տարան պարտէզն ու զրին իրանց բնի մէջ:

— Զաւակներս, դուք շատ



#### 42. ԾԻԾԵՌՆԱԿ

Խեղճ ծիծեռնակը, տես, ամենենին չէ հանգստանում. ամբողջ օրը թոշում է, ծղոտներ է հաւաքում, կտուցովը կաւ է կրում, իւր համար բուն է շինում: Բունը շինում, վերջացնում է թէ չէ, մէջը երեք ձու է ածում, նրանց վրայ երեք շաբաթ պինդ նստում և փոքրիկ ձագուկներ է հանում: Զագուկները որ դուրս են գալիս, բերանները բաց են անում և կերակուր խնդրում: Ծիծեռնակը թոշում, դէսուդէն է ընկնում, մժեղներ բռնում ու նրանց կերակրում:

Մի քիչ ժամանակ որ սնց է կենում, ձագերը թևաւորում են, բնիցը դուրս թոշում և իրանց մօր հետ ճանապարհ ընկնում, — կապոյտ ծովերի, բարձր սարերի վրայից անցնում:

#### 43. ՀՊԱՐՏ ԱՔԱՂԱՂ

Երկու աքաղաղ կուտեցին և մէկը յաղթեց միւսին: Յաղթուողը փախաւ, սրահի տակը մտաւ, իսկ յաղթողը բարձրացաւ կտուրը և հպարտ-հպարտ „ծուղրողու“ կանչեց: Այդ բոպէին արծիւը թոշում էր վերեից. նա նկատեց հպարտացող աքաղաղին, յարձակուց նրա վրայ, բռնեց ու տարաւ, անուշ արաւ:

Առած.— Ով ոք վքանայ, շուտով չքանայ:

#### 44. ՄՈՂՈՒՆՆԵՐ ԵՒ ԶԿՆԵՐ

Գորտը չորս ոտն ունի: Օձը ոտներ չունի. Նա իւր երկար մարմինը քաշ է տալիս գետնի վրայ: 2որ տեղերում, անտառում և դաշտում, դուք կըտեսնէք զեղեցիկ մողէսին: Թէ զորտի և թէ մողէսի փորը ման զալիս քաւում է գետնին: Գորտերն ու մողէսները չեն կարող վնասել մեզ, որովհետև թոյն չունին: Իսկ օձերը թունաւոր են: Նրանց կծածը վտանգաւոր է և շատ մարդիկ են մահացել նրանց թոյնից: Բայց ջրային օձերն էլ, զորտերի և մողէսների նման, թոյն չունին: Նրանց ատամներն այնքան մանր են, որ չեն կարող մարդու կաշին ծակել:

Բոլոր այս կենդանիները սողուն են կոչւում:

Ծովերում ու գետերում շատ տեսակ-տեսակ ձկներ են ապրում: Նրանք լողում են իրանց լողնակներով. ձկները սառն արիւն ունին. Նրանց մարմինը ծածկուած է թեփուկներով:

Սողուններ: — Մողէս, զորտ, օձ, կրիայ:  
Հկներ: — Կարմրախայտ, գայլաձուկ, օձաձուկ, կապոյտ, տառեխ, կողակ:



#### 45. ԳԻՒՂԱՑԻՆ ԵՒ 02Ը

Հմեռն էր: Գիւղացին անտառ գնաց փայտ կտրելու: Փայտ կտրելիս նա տեսաւ մի օձ, որ ցրտից սառել, փետացել էր: Բարի գիւղացին խղճաց օձին, վերցրեց, վրեց

կրակի մօտ, որ տաքանայ: Օձը տաքացաւ թէ չէ, վրայ հասաւ, որ կծէ գիւղացուն:

— Ապերախտ, — ասաց մարդը, — իմ լաւութիւնը դրանով ես վճարում: — Ասաց ու կացնով խփեց, գլուխը ջախջախեց:

Առաջ. — Օձն իրան տաքացնողին կըկծէ:

#### 64. ՄԻ ՃՍՏՆԵՐ

Գարունը բացւում է թէ չէ, հազարաւոր միջատներ են սկսում երկալ: Օդի մէջ մոծակներն ու մլակներն սկսում են իրանց զարնանային պարը: Նախշուն թիթեռները, ոսկեզոյն բգէզները, կանաչ մորեխները խաղում, զուարճանում են արեգակի ճառագայթների տակ: Բզզում է պիծակը, երգում, թոշկոտում է անգործ ճանճը: Մեղուն, ծաղկից ծաղիկ թռչկոտելով, քաղցր մեղը է ժողովում: Իսկ աշխատասէր մրջիւնն ահազին բեռը շալակած, վազում, շտապում է իւր քանդուած բունը նորոգելու:

Միջաւներ: — Ճանճ, բգէզ, թիթեռ, մեղու, մրջիւն, մոծակ, մլակ, պիծակ, մորեխ, սարդ, ճպու:

#### ԳՐԵՒԹԻ. ՎԵՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

22. Գրեցէք և ուր որ հարկաւոր է և կամ վ գրէք:

Մեր ուրացին գրա + աճառ է: Առա + օտը ես դպրոց պիտի զնամ: Վարդա + առին մեզ մօտ հիւրեր կըզան: Հայրս զեղեցիկ

զա+ազան զնեց: Թիւղացին մի օրսա+ար հող ունի: Թազա-  
+որը գո+եց իւր զօրա+արներին:

23. Գրեցէք և ուր որ հարկաւոր է օ կամ ո գրէք:

Ես հ+ըս նամակ գըեցի: Թիւղացին հ+ըից ցորեն է հանում: Սաթենիկը իւր մ+ը հետ նստած է այգում: Մ+ըին թոսի է: Վարդն անուշ հ+տ ունի: Հովին իւր հ+տը քշեց դէպի դաշտ:

24. Լբացքէք այս վարժութիւնը:

Տառեխը ձուկ է, իսկ բգէզը... Թիթեռը միջատ է, իսկ գորտը... Ճպուրը միջատ է, իսկ կարմրախայտը... Մողէսը սողն է, իսկ մլակը... Կրիան սողոն է, իսկ մըշինը...



47. ՄԵՂՈՒՆ ՈՒ ԹԻԹԵՌԸ

—Ախ, ափսոս, որ անձրե է զալիս,—ասաց թիթեռը և թաք կացաւ տերեների տակ:

—Այն, ափսոս,—ձայն տուեց

մեղուն, որ նստած էր նրանից ոչ հեռու:

—Եթէ լաւ եղանակ լինէր, —նորից ասաց թիթեռը, —ես կըթռչէի դէպի դաշտ, կըխաղայի և կըդուարճանայի:

—Իսկ ես կըգնայի իմ գործին և մեղը կըժողովէի ծաղիկներից,—ասաց մեղուն:

48. ՄԵՂՈՒՆ

Հա, ծագեցաւ արեգակը,  
Հա, ծաղկեցաւ մանուշակը,

Մեղուն թողեց իւր փեթակը՝  
Տըզտըզալով, տըզտըզալով:  
Մեղուն թռաւ ծաղկից ծաղկիկ,  
Մեղը առաւ քաղցր, անուշիկ,  
Մոմը տարաւ հոտոտ, լուսիկ՝  
Պըզպըզալով, պըզպըզալով:  
Անուշ մեղը մանը տղոց,  
Դեղին մոմը ամեն սրբոց,  
Իսկ չարերին կըճ ու խայթոց՝  
Կըսկըծալով, կըսկըծալով:

49. ՄՐՁԻԻՆԸ ԵՒ ԱՂԱԽԻՆԻՆ

Մրջիւնը ծարաւ էր: Նա մօտեցաւ առուակին, որ ջուր խմէ: Յանկարծ նա ջուրն ընկաւ և քիչ էր մմում, որ խեղդուի: Այդ լուպէին առուակի վրայով մի աղաւնի էր թռչում: Նա տեսաւ ջրի երեսին փռուած մըրջիւնին և խղճաց վրան: Իսկոյն շտապեց, ծառից մի տերե պոկեց ու զցեց առուակի մէջ: Մրջիւնը բարձրացաւ տերեկի վրայ և խեղդուելուց աղատուեց:

Առուակի մօտերքը մի որսորդ թռչուններ էր որսում: Նա տեսաւ մեր աղաւնուն, որ պատի վրայ նըստած հանգստանում էր: 2ար որսորդը հրացանը ուղղեց նրան, որ սպանէ: Մրջիւնը նկատեց այս բանը և վագեց, պինդ կծեց որսորդի ձեռքը: Որսորդը ցնցուեց. հրացանը տրաքեց, բայց չդիպաւ աղաւնուն:

Առաջ. —Ինչ որ ցանես, այն կըհնձնես:



## 50. ԹԻԹԵՌ ԵՒ ՄԱՆՈՒԿ

Մ Ա Ն Ո Ւ Կ.

— Սիրուն թիթեռ, ինձ ասա՛,  
Թէ ինչով ես դու ապրում.  
Ամբողջ օրը խաղում ես,  
Ի՞նչպէս է, որ չես յոդնում:

Թ Ի Թ Ե Ա Ռ.

— Սիրուն, կանաչ գաշտերում  
Ես ապրում եմ համարձակ,  
Ծաղկանց բուրմունքը անուշ  
Իմ կերակուրս է միակ:

Բայց իմ կեանքը շատ կարճ է,—  
Նա մի օրից չէ երկար.  
Բարի եղիք, ով մանուկ,  
Խնայիք ինձ, ձեռք մի տար:



## 51. ՀԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Մարդիկ ապրում են շինութիւն-  
ների մէջ: Հինութիւնները լինում  
են քարէ և փայտէ: Քարէ շի-  
նութիւնները շինում են որմնա-  
դիրները տաշած քարից և աղիւսից,  
իսկ փայտէ շինութիւնները — հիւաները՝ գերաննե-

րից: Հինութիւնները շինելիս և ուրիշ գործերի ժա-  
մանակ հարկաւոր են զանազան գործիքներ:

Հինութիւններ: — Տուն, դպրոց, գործարան, ամբար, (շտեմարան),  
սրահ, գոմ, ջրաղաց, ախոռ:

Դործիքներ: — Դանակ, սղոց, հերոն, ունելիք, մուրճ, կացին, ուրագ,  
մկրատ, պատառաքաղ, ածելի, բահ, թի, գուր, տսեղ, հարթիչ, խոփ,  
գութան, արօր, գերանդի, փոցին, մանգաղ, կամ, եղան:

## 52. ԾԱՌԵՐ ՈՒ ԹՓԵՐ

Ծառերն ու թփերը լինում են պտղատու և հա-  
սարակ: Մարդիկ պտղատու ծառերն ու թփերը  
տնկում են պարտէզներում: իսկ հասարակ ծառերն ու  
թփերը անտառներում են բուսնում: Ծառերից միքա-  
նիսը ծածկուած են լինում տերեններով, իսկ միւս-  
ները — փշերով: Ծառերը մարդիկ կտրում են և ստա-  
ցած փայտից իրանց համար բնակարաններ, նաւեր,  
կարասիներ և ուրիշ տեսակ մանր - մունր բաներ են  
շինում — տմաններ, խաղալիքներ, դասական առար-  
կաներ և այլն:

Ծառեր (հասարակ և պտղատու): — Կաղնի, մայրի, եղնի, ուռենի,  
կէշի, կեռասենի, տանձենի, խնձորենի, սալորենի, բալենի, ընկուզենի,  
թթենի, թղենի:

Թփեր: — Մորենի, մոշի, վարդենի, մասրի:

Պտուղներ: — Խնձոր, սալոր, տանձ, բալ, նարինջ, կիտրոն:

ԳՐԵՒՐ ՎԵՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

25. Գրեցէք այս բառերը և է տառի տակ գիծ քաշեցէք:

Հոտավտ: ծաղկաւէտ: Քաջապէս: Մեծապէս: Քարեղէն: Հողէն: ծշորէն: Հայերէն: Ռուսերէն: Ջօրհնէք: — Դնացէք: Կերէք: Կըգրէք: Կոտէք: Կրտեսնէք: — Յովհաննէս: Վրդանէս: Սամուէլ: Սուրէն: Ռուբէն: Արմինէ:

26. Գրեցէք և ուր որ հարկաւոր է եւ կամ է գրէք:

Կով+րն արածու+ն խոտաւ+տ դաշտում: Կայ+նն սպա-ն+ց Ար+լին: Այսօր մենք հայեր+ն դաս ունինք: Հեղին+ն Սա-մու+լին զիրք ընծայ+ց: Մարդիկ հողեղ+ն արարածներ +ն:

27. Լրացրէք այս վարժութիւնը:

Դանակը գործիք է, իսկ դպրոցը... Օձը սողոն է, իսկ քահը... Մայրին ծառ է, իսկ մուրճը... Մողենին թուփ է, իսկ խնձորը... Բալնին պտղատու ծառ է, իսկ եղինակն... Տանձը պտող է, իսկ դուրը... Վարդենին թուփ է, իսկ արջը... Մեղրն միջատ է, իսկ սալորենին...



53. ԱՆՑԱՌ

Ի՞նչ գեղեցիկ է անտառը: Ինչքան որ ներս ես գնում, այնքան հանդարտ է, այնքան սրանչելի է:

Բարձր, սիրուն ծառերը կարում են ճանապարհով: Ծառերի կանաչ տերենիրի միջավ կապոյտ երկինքն է երկում: Ճնների վրայ երգում են հազարաւոր թոշուններ: Բացի ծառերից անտառում շատ թփեր էլ կան: Ծառերի տակ, թփերի մէջ, բազմաթիւ կենդանիներ են ապրում—նապաստակ, աղուէս, եղջերու. կան և գիշատող գաղաններ—գայլ, արջ:

54. ԾԵՐՈՒՆԻՆ ԵՒՄԱՀՅ

Մի ծերունի անտառում քիչ փայտ կտրեց, կապեց, շալակն առաւ և գնաց դէպի տուն: Բեռը բաւական ծանր էր, տունն էլ հեռու: Ճանապարհին նա յոզնեց, վայր դրեց բեռը և ասաց.

— Այս, երանի թէ մահը գար, հոգիս առնէք:

Մահն էլ, կարծես, հէնց այդտեղ լինէր: Նա մօտեցաւ մարդուն և հարցրեց.

— Ահա ես, ի՞նչ ես ուզում:

Ծերունին սաստիկ վախեցաւ և պատասխանեց.

— Ես քեզ կանչեցի, որ այս փայտը շալակս տա:

55. ՀԱՅԱԲՈՅՑԵՐ, ԲԱՆՁԱՐԵՂԵՆՆԵՐ ԵՒ ԾԱՂԻԿՆԵՐ

Երկիրը մարդուն ձրի չի կերակրում: Ճատ պէտք է շարչարուի երկրագործը, շատ քրտինք պէտք է թափէ, որ առատ հայ ստանայ: Գիւղացին արօրով ու գութանով վարում է հողը, ցաքանով ցաքանում և յետոյ

զանազան բոյսեր է ցանում: Արտերում նա ցանում է հացաբոյսեր, բանջարանոցներում—շատ բանջարեղիններ, իսկ պարտէզներում—գեղեցիկ ծաղիկներ:

Հ ա ց ա թ ո յ ս ե ր: — Ցորեն, գարի, հաճար, վարսակ, ըրինձ, կորեկ:  
Բ ա ն ջ ա թ ե ղ է ն ն ե ր: — Գետնախնձոր, գաղար, սոխ, կաղամբ,  
սիսեռ, բողկ, վարունգ...

Ծ ա ղ ի կ ն ե ր: — Վարդ, շուշան, կակաչ, մեխակ, անթառամ, մա-  
նուշակ, ձնծաղիկ:

## 56. ՄԱՆՈՒՂԱԿ

Կապոյտ գիխով, կանաչ ոտով  
Ես ծաղիկ եմ անուշ հոտով.  
Թէս տունկս փոքրիկ է, ցած,  
Արօտներում միշտ թաք կացած,  
Բայց իմ փունջս ամենի տան՝  
Թէ աղքատի, թէ մեծատան,  
Իբրև զարնան առաջին զարդ,  
Կարէ տեսնել ամեն մի մարդ.  
Ես եմ սիրուն զարնան գուշակ.  
Եմ անունս է մանուշակ:



## 57. ՄԵՐ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՆ ՈՒ ԹՁՆԱՄԻՆԵՐԸ

Մարդիկ շատ թշնամիներ ունին գաղանների,  
թոշունների և միջատների մէջ: Գիշատիչ գաղաններն  
ու թոշունները յարձակում են մեր ընտանի կենդա-  
նիների և թոշունների վրայ: Ջատ միջատներ ահագին  
վնաս են հասցնում մեր դաշտերին, անտառներին, այ-  
գիններին և բանջարանոցներին: Սակայն մենք բազմա-  
թիւ բարեկամներ էլ ունինք կենդանիների մէջ: Ջատ  
փոքրիկ գաղաններ և թոշուններ ոչնչացնում են վնա-  
սակար միջատներին. մեղուները մեզ քաղցր մեղք և  
մեղրամոմ են տալիս, իսկ շերամը մետաքս է պատ-  
րաստում:

Մ ե ր բ ա ր ե կ ա մ ն ե ր ը: — Խլուրդ, ողնի, ագռաւ, ծիծեռնակ,  
գորա, մեղու, շերամ, սարեակ, կտցար:

Մ ե ր թ շ ն ա մ ի ն ե ր ը: — Գայլ, արջ, աղուէս, մուկ, բաղէ, ցին,  
թիթեռ, մորեիս:

## 58. ՀԱՆՔԵՐ

Մարդիկ երկրից զանազան մետաղներ են ձեռք  
բերում—ոսկի, արծաթ, երկաթ, պղինձ, արծիճ: Մե-  
տաղներից շինում են շատ առարկաներ՝ բահ, խոփ,  
սղոց, կացին, ուրագ, օղեր, մատանիներ: Երկրի մէջ  
կան և բազմաթիւ հասարակ ու թանկագին քարեր:  
Հասարակ քարերը մարդիկ գործ են ածում շինու-

թիւնների համար, իսկ թանկագին քարերը—զարդարների:

Մ ե տ ա ղ ն ե ր:—Ոսկի, արծաթ, պլատին, պղինձ, երկաթ, պողպատ, արծիճ, կլեկ:

Հ ա ս ա ր ա կ և թ ա ն կ տ գ ի ն ք ա ր ե ր:—Որձաքար, չեշաքար, կայծաքար, կրաքար, աղքար, աղամանդ, զմբուխտ, յակինթ:

#### Գ Բ Ա Խ Ո Ր Վ Ա Ր Փ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ե Ր

28. Արտագրեցէ՛ք և յ տառի տակ գիծ քաշեցէ՛ք:

Ես մի քահանայ տեսայ: Այս երեկոյ լնկերս կըզայ: Էսօրուայ գործը վաղուան մի՛ լոռոնիր: Ամառուայ փուշը—ձմեռուայ նուշն է: Մինչեւ տղան չլայ, մայրը նրան ծիծ չի տայ:

29. Արտագրեցէք այս բառերը:

Ասա՛: Գնա՛: Արա՛: Կարդա՛: Խաղա՛:—Անսա: Եղիա: Երեմիա: Ովսաննա: Իտալիա:—Սա: Դա: Նա: Ահա: Այս: Քո:

30. Լրացրէք այս վարժութիւնը:

Դարին հացարոյս է, իսկ ոսկին... Շուշանը ծաղիկ է, իսկ աղամանը... Կիտրոնը պտուղ է, իսկ վարոնզը... Կակաչը ծաղիկ է, իսկ չեշաքարը... Թղինին պտղառու ծառ է, իսկ ոտենին... Ժիծեռնակը մարդուն բարեկամ է, իսկ մորեխը...

#### 59. Ո Ս Կ Ի Ն Ե Կ Ե Ր Կ Ա Թ Ը

Մի անգամ ոսկին ու երկաթը վիճում էին միմեանց հետ:

—Ես ամենից լաւ մետաղն եմ,—ասում էր ոս-

կին.—ամենքը սիրում են ինձ և լաւ պատիւ են տալիս: Մարդկանց համար ես փող էլ եմ, զարդարանք էլ. ինձանից, ինչ ասես, շինում են՝ սիրուն շղթաներ, թանկագին մանեակներ, մատանիներ, օգեր. Էհ, էլ ի՞նչ երկարացնեմ. Եթէ ուզենամ, ամբողջ աշխարհը կըզնեմ:

—Ճա՞տ ես պարծենում, ոսկի՛ աղա,—պատասխանեց երկաթը.—Ճշմարիտ է, մարդիկ քեզ շատ երես են տալիս, բայց մենակ դու չես աշխարհիս տէրը: Եթէ մարդ ուզում է ապահով ասլրել, նրան երկաթ էլ է հարկաւոր. տուն շինելու համար ոսկէ կացնով չեն կտրում փայտը. հաց ունենալու համար ոսկէ արօրով չեն վարում հողը. գաղաններից պաշտպանուելու համար ոսկէ հրացան չեն բանեցնում: Եթէ դու, ոսկի՛ աղա, կարող ես աշխարհը գնել, ես էլ, լաւ գիտենաս, կարող եմ բոլորը ձեռքիցդ խլել:

Առածներ:—Ոսկին պատիկ է, բայց զինը մնձ է:—Երկաթը տաք-տաք կըծեծեն:

#### 60. Զ Ո Ւ Թ

I.

Զուրը լինում է ջրհորներում, աղբիւրներում, լճերում և ծովերում. նա մեզ հարկաւոր է խմելու, կերակուր պատրաստելու և զանազան բաներ լուանալու համար: Զուրը պտըտացնում է ջրազացի անիները: Ջրով հանգչնում են կրակը, ջրում են պարտէզները,

այգիները, բանջարանոցներն ու արտերը: Գետերի, լճերի և ծովերի մէջ ապրում են ձկներ, գորտեր և ուրիշ շատ կենդանիներ: Սագերը, բաղերն ու կարապներն էլ սիրում են լող տալ ջրի երեսին:

II.

Զմեռ ժամանակ ջուրը սառչում, սառոյց է զառնում: Անձրեսի տեղը ձմեռը ձիւն է զալիս: Զիւն ու սառոյցը գարնանը հալում են և ջուրը հոսում է դէպի գետերն ու լճերը: Տաքութիւնից ջուրը եռում, գոլորշի է զառնում: Անձրեսը շատ հարկաւոր է ծառերի, թփերի, խոտերի և ուրիշ բոյսերի համար: Առանց ջրի բոյսերը կըշորանան:

61. ՄԵՐԴՈՒ ՄԵՐՄԻՆԸ

Մարդու մարմնի մասերն են՝ զլուխը, պարանոցը, բունը, ձեռքերը և ոտքերը: Զեռքերով մենք աշխատում ենք, իսկ ոտքերով ման ենք զալիս: Մարդը պէտք է կերակրուի, որ նրա մարմինը առողջ և ուժեղ լինի: Կերակրուը մարսում է ստամոքսի մէջ:

Մարմնի մասերը: — Գլուխ, պարանոց, բուն, ձեռքեր, ոտքեր:  
Գլուխ մասերը: — Գանգ, ճակատ, քիմքեր, յօնքեր, կոպեր, աչքեր,  
ականջներ, այտեր, բիթ, շրթունքներ, բերան, կղակ:  
Բնի մասերը: — Կուրծք, փոր, կողեր, մէջք:  
Զեռքի (թեր) մասերը: — Ուս, աբմունկ, գտստակ:  
Ոտքի մասերը: — Ազդք, սրունք, գարշապար:

62. ՀԻՆԳ ԶԳԱՅՅՐԱՆՔ

Մենք աչքով տեսնում ենք, ականջով լսում, քթով հոտ քաշում, լեզուով համն իմանում, իսկ մատներով շօշափում ենք և իմանում, թէ առարկան պի՞նդ է թէ փափուկ, սանոք թէ տաք, հարթ թէ անհարթ:

Աչքը տեսողութեան զգայարանքն է, ականջը — լըսողութեան, քիթը — հոտառութեան, լեզուն — ճաշակելիքի, իսկ մատները և ամբողջ մարմինը — շօշափողութեան:

63. Գ Ա Ր Ո Ւ Խ

Զերմիկ փայլեց արեգակը,  
Գարձաւ մեզ մօտ ծիծեռնակը,  
Աչքը բացեց մանուշակը,  
Հասաւ գարնան եղանակը:

Ամպը թնդաց գոռգոռալով,  
Ճիթ-շիթ անձրես ծործորալով.  
Դաշտն ու պարտէզ զուարթացն.

Ահա կապեց և ծիածան:  
Օրնած լինի գալդ, գարուն,  
Դու եղանակ անուշ, սիրուն,  
Ճուտով բեր մեզ ուրախ գատիկ,  
Աշխատում են ժիր ու կարգով:

64. ՕՐԵՐ, ԱՄԻՍՆԵՐ ԵՒ ՏԱՐՈՒԱՅ ԵՂԱՆԱԿՆԵՐ

Ջարաթն ունի եօթն օր — երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ և կիւրակի: Օրերից կազմում են ամիսներ, ամիսներից — տարիներ: Տարին ունի տասներկու ամիս — յունիար, փետրուար, մարտ, ապրիլ, մայիս, յունիս,

լիս, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր և  
դեկտեմբեր:

Մարտը, ապրիլը, մայիսը — գարնան ամիսներ են,  
յունիսը, յուլիսը, օգոստոսը — ամրան, սեպտեմբերը,  
հոկտեմբերը, նոյեմբերը — աշնան, իսկ դեկտեմբերը,  
յունուարը և փետրուարը — ձմրան:

Գարունը, ամառը, աշունը և ձմեռը տարուայ չորս  
եղանակներն են:

#### ԳՐԵՒԹԻՒ ՎԵՐՓՈՒԹԻՒՆՆԵՐ

31. Արտագրեցէք և ուր որ հարկաւոր է յ աւելացրէք:

Աննա՛, զնա՛, հայրիկին ասա՛, որ զա ինձ մօտ: Ահա քո  
տետրակը, նղիա: Դինվաքէ՛, մայրդ կըզա՞ այգի: — Այո, պա-  
տասխանեց նա: Ճաշից յետոյ մի տղա կառքի տակ ընկաւ. ես  
մօտեցա, վեր առա եւ տարա տուն:

32. Գրեցէք և աւելացրէ՛ք պակաս տառերը:

Ոչինարն+րի հ+տն արածում է ծաղկաւ+տ դաշտում:  
Աստ+ած պատժում է շար+րին: Ո+ որ կարդա+, +ետո+  
լաւ մարդ կըդառնա+: Կա+ից ըրուտը աման է շինուա: Արամ,  
զիրքը ընկա+: Այս+ր անձր+ է զալիս: Այս երեկո+, թէ+ից  
յետո+ մեր Սուր+նը նամակ պիտի զր+ հ+ըզ:

33. Լրացրէք հետեւալ վարժութիւնը:

Արժիճը մետաղ է, իսկ զլուխը... Կուրծքը ընի մասն է, իսկ  
ականջը... Յունուարը ամսի անոն է, իսկ երեքշաբթին... Բունը  
մարմի մասն է, իսկ զարունը...

34. Գրեցէք քանի դպայարանք ունի մարդը և որոնք են նբանք:

35. Գրեցէ՛ք առանձին-առանձին օրերի, ամիսների և տարուայ եղա-  
նակների անունները:

#### 65. ՀՈՐՍ ԵՂԱՆԱԿ

Զիւնը հալում է, խոտը կանաչում, ծառերը ծաղ-  
կում, օրը երկարում: Այս Երբ է լինում:

Ամիսներ անցան. օրերը տաքացան, ամպերը բար-  
ձրացան, անձրև թափեցին: Արտերն հասել են, հըն-  
ձող են կանչում: Այս Երբ է լինում:

Մարդիկ դուրս եկան, այզին քաղեցին: Օրը կար-  
ճացաւ, հունձը վերջացաւ, բարակ անձրևը բարձրից  
է մաղլում և մութ գիշերը չորս կողմղ բռնում: Այս  
Երբ է լինում:

Գաշտ ու ձոր ահա ձիւնով ծածկուեցան, ծառե-  
րից սառցէ չիթեր կախուեցան: Մարդիկ քաշուեցան  
իրանց տները, իսկ գաղանները իրանց բները: Գուրաը  
ցուրտ քամին փշում է, փշում և ձիւնի թեփով աշքերդ  
լցնում: Այս Երբ է լինում:

#### 66. ՄԱՂԹԱՆՔ ՄԸՆԿՑԱՆ

Արի գու, արի,

Քո զալդ բարի,

Սիրուն նոր տարի,

Նոր օրեր բեր մեզ:

Զիւն տուր սարերին,

Անձրի՝ արտերին,

Կարկուտը՝ շարին,

Զով արեր՝ մեզ:

Անթուփ ծաղիկից,

Աններկ կարմրուկից,

Բարի ցաւերից

Ազատ պահիր մեզ:

Մայրական զթով,

Գրկաբաց ձեռքով,

Քաղցը ժպիտով

Առ քո զիրկը մեզ:

## 67. ԱՐՄԱՆ ՑԱՆԿՈՒԹԻՒՆ

1.

Հմեռն էր: Աշոտը խաղում ու սահում էր սառոյցի վրայ: Բաւական խաղալուց յետոյ՝ նա ուրախ-ուրախ, կարմրած թշերով վագեց տուն և ասաց հօրը.

—Ախ, հայրիկ, ինչ պատուական եղանակ է ձմեռը: Ես կը ցանկանայի, որ միշտ ձմեռ լինէր:

Հայրը հանեց իւր ծոցի տետրակը և նրա մէջ նշանակեց Աշոտի այս խօսքերը:

2.

Եկաւ գարունը: Աշոտը դուրս գնաց գաշտը, ծաղիկներ քաղեց, թիթեռներ բռնեց և յետոյ վազելով հօր մօտ՝ ասաց.

—Ի՞նչ հիանալի է գարունը: Ես կըցանկանայի, որ միշտ գարուն լինէր:

Հայրն Աշոտի այս ցանկութիւնն էլ նշանակեց իւր տետրակում:

3.

Հասաւ ամառը: Աշոտը իւր հօր հետ հնձի գնաց: Ամբողջ օրը մանուկը խաղում, զուարճանում էր—ձուկն էր որսում գետակից, ծաղիկներ հաւաքում և զլորում հոտաւէտ խոտերի մէջ. երեկոյեան նա ասաց հօրը.

—Ախ, հայրիկ, երանի թէ ամառը վերջ չունենար:

Աշոտի այս խօսքերն էլ զրուեցան նոյն տետրակի մէջ:

4.

Վերջապէս եկաւ աշունը: Այգիներում սկսեցին պտուղներ ժողովել: Աշուն ուրախ-զուարթ դէս ու զէն էր վագում, ամեն պըտղից էլ անուշ անում. վերջը մօտեցաւ հօրը և ասաց.

—Աշունը տարուայ բոլոր եղանակներից ամենալաւն է:

Այն ժամանակ հայրը բաց արեց իւր ծոցի տետրակը և ցոյց տուեց Աշոտին, որ նա զարնան, ձմրան և ամառուան մասին էլ միենոյնն է ասել:

Առաջներ: —Դարնան զառն է գովելի, աշնան հաւը: —Ամառուայ փուշը՝ ձմեռուայ նուշն է: —Դառը զարնան, ձինը ձմրան:

## 68. ՏՂԱՅՈՅՑ ԱՂՈԹՔ

Հայր մեր երկնաւոր, Հայր ամեն մարդի,  
Դու ինձ ամեն օր տաս հազար բարի—  
Վեանք, լոյս, կերակուր, հայր և քաղցրիկ մայր,  
Մեծ ու փոքրիկ քոյր, անուշիկ եղբայր:  
Իսկ ես ինչ ունիմ, որ ինչ տամ Քեզի.  
Առջեղ կընկնեմ, կենամ աղօթքի.  
«Ճնորհգ տուր ինձ, որ ծնողներիս,  
Ուսուցիչներիս և իմ մեծերիս  
Լինիմ սիրելի, իսկ Քեզ հաճելի»:

## 69. Հ Ե Ք Ի Ա Թ

1.

Ժամանակով մարդու մէկը մի էշ ունէր, որը երկար տարիներ ծառայել էր նրան, իսկ այժմ՝ ծերացել, ոյժից բոլորովին ընկել էր. զրա համար տէրը նրան վատ էր կերակում և ուզում էր մորթել, կաշին հանել: Էշը հասկացաւ այս և մի օր զլուխն առաւ, փախաւ-զնաց:

Գնաց-զնաց, ճանապարհին պատահեց մի որսկան շան: Խեղճ շունն այնպէս հեռում էր, որ քիչ էր մնում՝ շունշը կտրուի:

—Ինչու ես այդպէս հեռում, շուն եղբայր, —հարցրեց մեր էշը:

—Ախ, —պատասխանեց շունը. —Ես ծերացել եմ և էլ որսի զնալ չեմ կարող. զրա համար իմ տէրն ուզում էր ինձ սպանել. Ես էլ զլուխս առայ, փախայ նրա մօտից: Բայց շգիտեմ, թէ ինչպէս պէտք է հայ ճարեմ:

—Գիտես, ինչ կայ, —ասաց էշը, —Ես զնում եմ այս մօտիկ քաղաքը երգիշ զառնալու: Արի, ինձ հետ ընկերացիր, միասին զնանք: Ես կընկեմ, զու էլ թմրուկ կըխփես:

Զունը համաձայնուեցաւ և երկուսը միասին առաջ գնացին:

2.

Հատ զնացին, թէ քիչ, պատահեցին մի կատուի:

—Բարե, փիսիկ, ինչու այդպէս տխուր ես, —հարցրեց էշը:

— Ի՞նչպէս կարող եմ ես ուրախ լինել, սիրելի էշ, — լալագին պատասխանեց կատուն. — տեսնո՞ւմ ես, ես ծերացել եմ, բոլոր ատամներս թափուել են և էլ չեմ կարող մուկը որսալ. դըրա համար իմ տիրուհին ուզում էր վզիցս մի քար կապել, ջուրը զցել, որ խեղուեմ: Ասենք՝ այդ փորձանքից պրծայ, փախայ, բայց չզիտեմ, ուր գնամ, ինչ անեմ:

— Երկուս չինինք, երեք լինինք, — ասաց էշը, — արի, գընանք այս մօտիկ քաղաքը երգիշ գառնալու:

Կատուն համաձայնուեցաւ և երեքը միասին շարունակեցին ճանապարհը:

### 3.

Գնացին, գնացին, պատահեցին մի աքաղաղի, որը դռան առաջ կանգնած՝ որքան ոյժ ունէր, կանչում էր:

— Ինչո՞ւ ես այդպէս աղաղակում, աքաղաղ եղբայր, — հարցըց էշը. — Ինչ է պատահել քեզ:

— Էլ ինչ պիտի լինի, — պատասխանեց աքաղաղը. — վաղը իմ տիրոջ տօնն է, շատ հիւրեր են կանչուած: Այդ պատճառով տանտիկինը հրամայեց, որ ինձ մորթեն, վաղուան համար կերակուը պատրաստեն:

— Մի վշտանար, — ասաց էշը. — Երեք չինինք, շորս լինինք. դուլաւ ձայն ունիս. արի մեզ հետ, գնանք, դու էլ երգիշ դարձիր:

Աքաղաղն էլ համաձայնուեցաւ և նրանք բոլորը միասին ճանապարհ ընկան:

### 4.

Ջատ գնացին թէ քիշ, իրիկնապահին հասան մի անտառ և վճռեցին զիշերն այնտեղ անցկացնել: Էշն ու շունը պառկեցին մի մեծ ծառի տակ, կատուն բարձրացաւ, նստեց ճիւղի վրայ, իսկ աքաղաղը ծառի գաղաթին թառեց: Այստեղից նա շորս կողմը նայեց, տեսաւ, որ հեռուից մի լոյս է երևում:

— Այստեղից ոչ հեռու կարծեմ մի տուն կայ, — կանչեց նա ընկերներին:

— Վեր կացէք, գնանք այնտեղ, էլի մի բան կըդտնենք ու տելու. թէ չէ այստեղ շատ վատ է, — ասաց էշը:

### 5.

Բոլորը վեր կացան և ճանապարհ ընկան գէպի այն կողմը, որտեղից լոյս էր երեռւմ: Ճուտով նրանք հասան մի տան, որտեղ բառասուն աւազակ էին բնակւում: Էշն ամենից մեծն էր. նա գնաց, պատուհանից նայեց, որ տիսնի, թէ ներսն ինչ կայ: Երբ վերադարձաւ, աքաղաղը հարցրեց.

— Ի՞նչ կայ, ինչ չկայ այնտեղ:

— Էլ ինչ պիտի լինի, — պատասխանեց էշը, — տան մէջտեղը մի մեծ սեղան է բաց արած, վրան լաւ-լաւ կերակուըներ ու խմիչքներ շարած, չորս կողմը քառասուն աւազակ նստած՝ ուտում-խմում են:

Կերակուըների անունը որ լսեցին, բոլորի բերանի ջուրը գնաց: Աքաղաղն ասաց.

— Ի՞նչ լաւ կրիինէր, որ այդ բոլորը մեր առաջ շարուած լինէր:

— Այո՛, — հառաչեց էշը. — գոնէ մի քիշ փորերս կըկշտացնէինք:

Նրանք սկսեցին խորհուրդ անել, թէ ինչպէս անեն, որ աւազակներին այդտեղից փախցնեն: Մտածեցին, մտածեցին և վերջապէս վճռեցին, որ էշը բարձրանայ, կանգնի պատուհանի առաջ, շունը նստի նրա մէջքին, կատուն բարձրանայ շան վրայ, իսկ աքաղաղը թռչի, նստի կատուի գլխին:

### 6.

Ինչպէս որ վճռեցին, այնպէս էլ արին: Յետոյ բոլորը միասին սկսեցին աղաղակել: Էշը գռում էր, շունը հաշում, կատուն մլաւում, իսկ աքաղաղը կանչում: Յանկարծ պատուհանը վշըրուեց և բոլորը միասին ներս զլրուեցին: Աւազակները կարծեցին, թէ եկել են իրանց բոնելու, սարսափած թողին տուն ու տեղ, փախան գէպի անտառ: 2որս ընկերների ուզածն էլ հէնց այդ էր. նրանք իսկոյն նստեցին և այնքան կերան, որ կարծես մի ամիս ոչինչ չէին կերել:

Երբ լաւ կերան-կշտացան, ճրագը հանգցըն և պառկեցին քնելու: Էշը պառկեց բազում, ազրի վրայ, շունը դռան յետեր, կատուն վառարանի մօտ, իսկ աքաղաղը բարձրացաւ, նստեց դռան վրայ, և երկար ճանապարհ գնալուց յողնած լինելով, շուտով բոլորն էլքնեցին:

### 7.

Պէս զիշերին, երբ հեռուից աւազակապետը տեսաւ որ տանն էլ կրակ չկայ և ոչ մի ձայն չի լսում, ասաց աւազակներից մէկին.

— Գնա, տես, թէ ինչ կայ մեր տանը:

Եւազակը գնաց, տեսաւ, որ ձախ-ծպտուն չկայ, ներս մտաւ և  
ուզում էր ճրագ վառել: Մութ սենեակում կատուի աշքերը պըս-  
պղում էին. նա կարծեց, թէ լուցկի է, մօտեցաւ, որ վեր առնի.  
բայց կատուն յանկարծ թուաւ նրա երեսին և մի լաւ ճանկոռ-  
տեց: Եւազակը սաստիկ վախեցաւ և ուզեց վախչել, բայց շունը,  
որ դոան մօտ պարկած էր, վրայ հասաւ և ոտք կծեց: Երբ նա  
ուզում էր բագի միջով վախչել, էշը իւր յետին ոտներով մի սար-  
սափելի աքացի տուեց նրան, իսկ աքաղաղը, որ այդ աղմուկից  
արթնացել էր, դոան վրայից կանչեց՝ «Ճուղբուղու»:

8.

Կերջապէս աւազակը մի կերպ գուրս պըծաւ և վազելով զը-  
նաց աւազակապետի մօտ և ասաց.

— Օ՛հ, մեր տանը մի սատանայ կայ նստած. նա երեսս ճան-  
կոռտեց. դոան առաջ կանգնած էր մի մարդ, ձեռքին մի զանակ  
բռնած. նա ոտս ծակեց: Բագումը պարկած է մի մեծ դե. նա երկու  
հաստ գաւազանով այնպէս խփեց ինձ, որ քիչ մնաց՝ տեզս մնայի:  
իսկ կտուրը նստած է մի դատաւոր, որ կանչում էր. «բռնեցէք,  
ինձ մօտ բերէք այդ աւազակին»: Հազիւ վախայ և աղատուեցի:

Եւազակներն էլ սիրտ չարին վերադառնալ: Նրանք թողին ի-  
րանց տունը և հեռացան, ուրիշ աշխարհ զնացին: Իսկ մեր երգիշ-  
ներին այնքան դուք եկաւ այս տունը, որ վճռեցին միշտ այս-  
տեղ ապրել:

## 70. ՄԱՆՈՒԿՆԵՐՆ ՈՒ ԶԱԳՈՒԿԸ

(Մանկական խաղ)

Մանուկներ,

Սիրուն ձագուկ, չունիս մայրիկ և կամ հայրիկ,  
Որ թոշում ես ոլոր-մոլոր մեր շորս բոլոր:

Չազուկ:

Ուրուժն այսօր տարաւ իմ մօք:

Մանուկներ:

Զագիկ, մի լար, որբիկ մի լար,  
Դու չես մնալ անտէր, անմայը:  
Եկէր, քոյրեր ու եղբայրներ,  
Ընկնենք սարեր ու անտառներ,  
Գնանք-գտնենք, ինդրենք մէկին,  
Որ մայր դառնայ այս խեղճ ձագին:  
Սիրուն հաւքեր, երկնից հաւքեր,  
Առէր ձեզ հետ ձագին անտէր:

Կ կ ո ւ:

Կուկ—կու, կուկ—կու...

Մանուկներ:

Հէ, չէ, կկնւ, այլոց բնում  
Հու ես դնում, մայր չես դառնում:

Ա զ ո ւ ա:

Գումա, գումա, գում...

Մանուկներ:

Հէ, չէ, ագուաւ, գող, գիշակեր,  
Քեզ չենք յանձնիլ, մի կռայեր:

Կ ո ո ւ ն կ:

Կըս, կըս, կըս...

Մանուկներ:

Հէ, չէ, կունկն կարնանասէր,  
Մեր երկիրներ կայ ցուրտ ձմեռ:

Տատրակ:

Վու, վու, վու...

Մանուկյաներ:

2\xi, \zeta\xi, տատընկ, զիտենք, լաւ ես,  
Ազնիւ հաւ ես, բայց լալկան ես:

## Հազի մայրս:

Մարզն ուղութին սպանեց,  
Ինձ ճանկերից աղատեց.  
Տուքը ձագս, ինդրում եմ,  
Ո՞վ է գտել, փնտրում եմ:

Մանուկյաներ:

ԱՌ, առ, մայրիկ,  
Քո խեղճ ձագիկ,  
Սիրուն ծըտիկ,  
Որ չթռչի  
Ոլոր—մոլոր  
Մեր զորս բոլոր:

Զագնւկ, ձագնւկ, ուրախ կաց,  
Մօրդ զնա զըկաբաց,  
Հետը թռիք, հեռացիք,  
Անցած ցաւդ մոռացիք:

Զազը մօքը սիրում է,  
Առանց նրան տխրում է,  
Եղբ որ նրան զտնում է,  
Ուրախ ճշում, ճխտում է:



2013

3326

«Ազգային գրադարան»



NL0059714

